128. ԱՆԽԵԼՔ ԻՐԻԿ

Կէղնի-չէղնի՝ շատ անխելք մարդ մը. ըդի նա՛ խոսք կը հասկընա, նա՛ կոնա գործ էնե։ Կնիկ ըդոր կը ճամպե հերանց, որ էրկումատ[1] բերե. գլուտ դիզին, կէրթա, կառնե, հմա կը թալե կես ճամպին, կըսե.

— Իմ փիչից չի՛չի, քու քելքով արի տուն։

Գիլա տուն, կնիկ կը հարցու.

— Զէրկու-մատն բերի՞ր։

— Չէ՛,— կըսե,— թողի կես ճամպին, ինքն ուրին գիկա։

Կնիկ կը հասնի, բամբ մը էրկու կը զարկե դլխուն, կը ճվա։

— Էրկու-մատն չո՞տք ունի՝ որ գա, գնա՛ բի՛։

Մարդ կէրթա, կառնե զէրկու մատ՝ գիկա։

Քանիմ օր չետև՝ կնիկ կըսե.

— Գնա իմ հերանց՝ թեռ մը կա, ա՛ռ բի, զցորեն լցինք։

Մարդ կէրթա, զթեռ կը վերու, գիկա, կես ճամպին կը տեսնա՝ էշ մը։

— Է՛շ,— կըսե,— իդա թեռ չա՞ռնիս։

Էշ, դու էշ, վըր խոսքին՝ զգլուխ կը բանձրցու, կը զռա, էդի կը հասկընա, որ զթեռ կառնե, կը թալե վըր իշուն, կը թորկե գիկա։ Կնիկ կը հարցու.

— Շորնի թեռ բերի՞ր։

— Չէ՛,— կըսե,— զթեռ տվի իշուն։

---

[1] *Երկծայրանի եղան (Ծ. Կ.)։*

— Քու պատանք կարիմ,— կը բոռա կնիկ,— ի՛մալ ովեցիր իշուն, գնա՛ շուտ, ղթեռ բի՛։

Մարդ կէրթա կը տեսնա՝ էշ չկա, հանդէ էն դիեն մեռել մե կը ընրին, կը մոտենա, մեռելավորներուն կը հարցու.

— Գյա՛լո, էշ մե ու թեռ մե չըք տե՞սի։

Մեռելավորներ կը թափին վրեն, աղեկ մե կը ծեծին. մարդն անջախ, ծեծուկ-ջարդուկ, կը թալե ուրին տուն։

— Բերի՞ր,— կը հարցու կնիկ։

— Չէ՛,— կրսե,— նա՛ էշ կեր, նա՛ թեռ։ Մեռելավորներուց հարցուցի, ադեկ մե ծեծեցին, անջախ պրծա էկա։

— Տո՛, վարամ թալուկ,— կը բոռա կնիկ,— մեր թեռն յո՞ւր, մեռելավորներն յո՞ւր։

Կը քաշե դդոպալ, դընկնա ջան, ադեկ մե կը ծեծե ըդրան, կրսե.

— Էս քըզի խրատ։ Շո՛ւտ գնա իմ հերանց, քուլակ[2] մե ա՛ռ բի, օր կաավար ջրինք։

Մարդ կէրթա, ղքուլակ կառնե, յետ գալուս կը տեսնա՝ կրակն յընկի մեկ տուն կը վառի, բոցն յելի՝ կը հասնի էրկինք։ Քուլակն ի ձեռ՝ կը կանի թամաշա կէնե, ու հետ լե հմա՞լ կը ծիծղա. քանիմ՝ մարդ կը հասնին, դքուլակ կառնին ձեռքեն, վղկոթին կը դարկին, կը փախցուն։

— Բերի՞ր,— կը հարցու կնիկ։

— Տո՛, կնի՛կ, գացի ղքուլակ առա, կը բերենք, տեսա մեկ տուն կրակ յընկեր է կը վառի, կանա՝ թամաշա կէնենք, ընձի կը ծիծղենք, քանիմ՝ մարդ հասան, դքուլակն առան ձեռքես, վղկոթին դարկին, փախցուցին։

— Ա՛խմախ, առեր ին օր ջուր կրին, լցին վրը կրակին. դնա ղքուլակն առ բի՛։

Մարդ կէրթա, ղքուլակ կառնե, ջուր կը լցե մեջ, դիկա դարբնոցիմ՝ յառջևեն գընցնա. կը տեսնա դարբնոցի քուրեն հմա՞լ կը վառի, բոց ու կեծ կը թոնան յառիք, անխելք, գու անխելք, հմա ղքուկի ջուր կը լցե կրակին, կը մերե, դարբին ու աշկերտ կը հասնին, ադեկ մե կը ջարդին, կը փախցուն։

— Ձքուլակ բերի՞ր,— կը հարցու կնիկ։

— Քու հորն օղորմի, ղքուլակ լցի ջուր՝ գիկենք, տեսա մրջ ղարբնոցին հմա՞լ կրակ մե կը վառի, ըսի՝ էն տան պես է, ջուր

---

[2] Փայտյա դույլ (Ս. Կ.)։

լցի, ըսի մերիմ զկրակ, էրկու մարդ թափան վրես, աղեկ մե ծեծին. փախցուցին։

Կնիկ, դու կնիկ, էս հաղ կը քաշե զհըրիսի անթրոց, ու ա՛ռ հա զլխուն ու մեջքին, հմա ի՛նչ, կրսին էդ մարդուն նա՛ խրատ, նա՛ ծեծ է օգնի, մանցեր է յառեջվա անխելք ու անխելք։